

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼՍՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ՍՐԲՈՒՀԻ ՌԱՏՅԱՅԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ



17 ապրիլի, 2023

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Նարեկ Գազիկի Սուքիասյանի «Եղիշե Չարենցը եւ 20-րդ դարասկզբի համաշխարհային գրական զարգացումները» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Վ. Պարտիզոնու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 17.04.2023 թ. թիվ 9 նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, բ.գ.թ., դոցենտներ Քնարիկ Աբրահամյանը, Լուսինե Գալստյանը, Նաիրա Խաչատրյանը, Արմենուհի Մուրադյանը, մ.գ.թ., դոցենտ Նաիրա Տողանյանը:

ԼՍԵՑԻՆ՝ Նարեկ Գազիկի Սուքիասյանի «Եղիշե Չարենցը եւ 20-րդ դարասկզբի համաշխարհային գրական զարգացումները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտում գործող ԲՈԿ-ի գրականագիտության գծով 003 մասնագիտական խորհրդում պաշտպանության երաշխավորելու հարցը՝ Ժ.01.02 «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ բանասիրական զիտությունների թեկնածուի զիտական աստիճանի համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՅԻՆ՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, բ.գ.թ., դոցենտներ Քնարիկ Աբրահամյանը, Լուսինե Գալստյանը, Նաիրա Խաչատրյանը, Արմենուհի Մուրադյանը, մ.գ.թ., դոցենտ Նաիրա Տողանյանը:

Չարենցագիտության ճանապարհը հարյուր եւ ավելի տարիներ ստուգության եւ հասունության շարունակական քննություն է անցնում: Նորագույն շրջանում գիտակցում ենք, որ մեր պարտքերը ամեհի բանաստեղծի վիթխարի ժառանգության ուսումնասիրության, գրական հայացքի ամբողջացման չափումների ոլորտում կուտակվում են, քանի որ աստիճանաբար պարզում ենք նրա եւ այս դժվարին ժամանակի հարաբերության տիպաբանական տեսողության անհրաժեշտությունը:

Ատենախոս Նարեկ Գագիկի Սուքիասյանը ՀՀ ԳԱԱ Գրականության Ինստիտուտի աստիճաններ շնորհող գիտական խորհրդին ներկայացրել է բանաստեղծի գրականագիտական ընկալման նոր պատուհան՝ «Եղիշե Չարենցը եւ 20-րդ դարասկզբի համաշխարհային գրական զարգացումները» խորագրով ատենախոսություն՝ փորձելով ազգային հզոր երգչին ճանաչել 20-րդ դարի գրական հոսանքների երեք աստիճանացույցերում՝ սիմվոլիզմի, ֆուտուրիզմի եւ մոդեռնիզմի հանգույցներում:

Թեկնածուական այս աշխատանքը կոչված է նոր խոսք ասելու հավակնությամբ փակելու չարենցագիտության որոշ «պարտքեր», որոնցից երկուսը կուզենայինք առանձնացնել հրատապ հարցադրումների կարգում:

Նախ, քննենք մոտեցման առաջին «նորարար» դրույթը, որը վերաբերում է գրական երեք հոսանքների՝ Չարենցի բանաստեղծության հետ գիրկընդխառն մատուցման սկզբունքին: Այստեղ մեկնական առաջնային գծի վրա պիտի լինեն Չարենց անհատականության եւ հարակից հոսանքների բարդագույն խնդիրների յուրացման պատմությունը՝ հնարավոր ազդեցություններ, հրապույրներ, ինչպես եւ դժվարությունների հաղթահարման պարտադիր նախապայմաններ, որոնք չեն արվել:

Մեզ ներկայացվածը հայտնի հոսանքների բնութագրման ցանուցիր, հատվածական պատմություն է, մտքերի՝ դեսից-դենից վերցված պատառիկներով:

Ատենախոսության քննական երկրորդ ուղղությունը պիտի լիներ բանաստեղծի եւ համաշխարհային գրական զարգացումների համընթացության բացահայտումը: Մինչդեռ Ն. Սուքիասյանը «ծանրացել է» միայն Գարսիա Լորկայի օրինակի վրա:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ երեքական ենթազվիտով, եզրակացությունից եւ օգտագործված գրականության ցանկից:

Եթե քննելու լինենք ատենախոսության կառուցվածքը, ապա պիտի նշել, որ հիմնավորված չեն եւ վերացական են ենթազվուխների բաժանումները. շարադրանքը չի գալիս արտահայտելու բովանդակային շաղկապումները: Մեր նկատառումների մեջ երկրորդական չենք դիտում վերնագրում 20-րդ դարասկզբի համաշխարհային գրական զարգացումների առաջադրության դիմաց ատենախոսի՝ ավելի շատ 19-րդ դարի իրողություններով ու բանաստեղծական նվաճումներով ուղղորդվելու փաստը:

Ներածության մեջ ատենախոսը խոստանում է շարադրանքը տանել «համեմատական, ժամանակագրական, թեմատիկ-ժանրային եւ վերլուծական մեթոդների համադրմամբ, ուրվագծել Չարենցի երկերում 20-րդ դարի առաջին տասնամյակների համաշխարհային գրականության զարգացումների արձագանքը, նաեւ ցոյց տալ Չարենցի ստեղծագործությունների վրայ սիմվոլիզմի, ֆուտուրիզմի եւ մոդեռնիզմի թողած ազդեցությունն այնքանով, որքանով եղավ կարեւոր եւ նշանակալից, որքանով պահանջում էր դարաշրջանը» (էջ 11): Ի դեպ, շարադրանքի մեթոդաբանության մասին նշվում է երկու անգամ (էջ 11 եւ 12): Իրականում աշխատանքում հարցադրումների հեւիհեւ վազք կա, լավագույն դեպքում՝ մեկ թեզի կամ սկզբունքի քննություն մեկ թռուցիկ պարբերության շրջանակում:

Ատենախոսության արդիականությունը հիմնավորել է փորձում Գոհար Աքելյանի «օգնությամբ» (էջ 4): Ինչո՞ւ:

Ինչո՞ւ այդքան հոռետես լինել, թե «գրական քննադատների մեծ մասը, ընդհանուր առմամբ, տեսնում էր միայն ձեւակառուցվածքային դրսևորումներ, անտեսելով եւ

կամ չնկատելով բնավ՝ տվյալ (°) ուղղության աշխարհայացքային, գաղափարական եւ գեղագիտական կողմերը» (էջ 4-5), երբ աշխատանքում հաճախ հաշվի չեն առնված չարենցագետների կարծիքները, ինչպես Դավիթ Գասպարյանի, Սեյրան Գրիգորյանի, Մարտին Գիլավյանի եւ ուրիշների պարագաներն են հուշում: Նույն տրամաբանությամբ՝ «Հետագայում սիմվոլիզմի պոետիկայի եւ նրա գեղագիտական խնդիրների վերաբերյալ գիտական ուսումնասիրությունների համապատկերն ինչ-որ չափով փոխվում է, սակայն համակարգված չի ներկայացվում հոսանքի իրական դիմագիծն ու նկարագիրը: Հայ գրականության վրա սիմվոլիզմի թողած ազդեցության հարցերը դեռեւս մնում էին լիովին չբացահայտված» (էջ 8): Հետեւում է ինքն իրեն հակասելու օրինակը. «Ի տարբերություն սիմվոլիզմի եւ ֆուտուրիզմի կարելի է ասել, որ մոդեռնիզմի հիմնահարցերը համարյա թե չեն վերլուծվում եւ ուսումնասիրվում ոչ մամուլի, ոչ էլ գրական հանդեսների էջերում» (էջ 10):

Ներածության մեջ երրորդ գլխի բացատրականում նշվում է, որ «ենթագլուխներում անդրադարձել ենք Չարենցի այն ստեղծագործություններին, որոնց մեջ արտացոլում են գտել մոդեռնիստական տարատեսակ ուղղությունները՝ իրապաշտություն, կուրոֆուտուրիզմ, սոցիալիստական ռեալիզմ, կոնստրուկտիվիզմ, որոնք բանաստեղծի ստեղծագործություններում արտացոլվեցին միմյանցից անկախ տրամաբանությամբ» (էջ 16): Գրապատմական նման խճողումը արտացոլվել է նաեւ աշխատանքի համապատասխան հատվածում:

Կան ավելորդ հիշատակումներ, ասենք, օրինակ, Ավ. Իսահակյանի՝ սիմվոլիզմին եւ Բողլերի ստեղծագործությանը ծանոթ լինելու հանգամանքը (էջ 8), Սեւակ Արզումանյանի դատումները վիպական ժանրերի մասին (էջ 19):

Առաջին գլխում, բերելով Չարենցի դատողությունը «Բրոնզե քո՛ւյր իմ...» բանաստեղծության առիթով, փակագծերում բերում է ավելորդ թվացող հիմնավորում (էջ 25):

Շարադրանքից ընդհանուր տպավորությունն այն է, որ չկա գիտական հստակ առաջադրություն, որին գալու կապվելու են տարբեր ելակետային հարցադրումներ:

Հաճախ մեկը մյուսին հաջորդում են անկապակից մտքեր ու օրինակներ (էջ 29): Պոլ Վեռլեն-Չարենց համադրման մեջ շատ ավելի մեկնաբանության կարիք էր զգում թերևս հայ բանաստեղծի դիմումը Լըկոնտ դը Լիլին (էջ 35): Ինչու խոսել «Հետերա-երագ»-ի մասին եւ մեջբերում կատարել «Հարդագողի ճամփորդներ»-ից (էջ 40-41):

Մի թե տերցիններով է շարադրված «Դանթեական առասպել» պոեմը (էջ 46):

Գանք Ա. Բլոկի՝ լերմոնտովյան «անվա Ռուսաստանին» հրաժեշտ տալու ակունքից բխած ու Չարենցի «Ես իմ անուշ...»-ի «գտարյուն հայրենասիրության»՝ օտարոտի զուգահեռ կազմած հակադիր օրինակներին (էջ 41), որտեղ չգիտես թե ինչու հայտնվում է Պաստերնակը:

«Չարենցի համար,- գրում է ստենախոսը,- հայտնագործություններ էին Էդգար Պոն, Շառլ Բոդլերը եւ Ս. Մալարմեն եւ դեռ ուրիշներ (այսինքն՝ ուրիշ ովքե՞ր -Ս.Դ.), որոնց հետ անմիջական կապը Չարենցի վաղ գործերում նկատելի է» (էջ 23)՝ հասնելով անգամ «Երեք երգ տխրադալուկ աղջկան» գործին՝ ընդգծելու համար «Էդգար Ալան Պոն եւ արդիականությունը» 2010-ին լոյս տեսած նյութերի ժողովածուի դատողությունը՝ չնշելով հեղինակին: Ու արդյո՞ք Է. Պոն Չարենցի «գրական կուռքն էր» (նույն տեղում): Արդյո՞ք «Էդգար Պոն մեծապես նպաստեց սիմվոլիստների՝ ինչպես աշխարհայեցողության ձեւավորման, այնպես էլ՝ պոետիկայի ամբողջական արժեքների «յուրացման» էական գործընթացներին» (նույն տեղում):

Երկրորդ՝ «Չարենցը եւ ֆուտուրիզմը» գլխում ապրիորի է թվում Ուոլթ Ուիթմենին ֆուտուրիզմի ակունքներում տեսնելու ջանքը, այն էլ՝ իրապաշտության քողով (էջ 65 եւ 86), ավելին՝ նրանից կատարել մեջբերում, երբ խոսք է բացվում ֆուտուրիստների մասին (էջ 66): Կամ Նարեկացուն վերագրել Լեւոն Մկրտչյանի «Գրիգոր Նարեկացի. խոովահույզ՝ Բախի խորալների պես» գրքի հայերեն թարգմանությունը (էջ 66), երբ Բախի անունը խորագրում պիտի բացառեր նման երեւոյթը: Ինչու ֆուտուրիզմին վերաբերող գլուխն ամփոփել սիմվոլիզմի մասին դատողություններով (էջ 92):

Երրորդ՝ «Եղիշե Չարենցը եւ մոդեռնիզմը» գլուխը սկսվում է պոստմոդեռնիզմի մասին ավելին իմանալու հորդորով՝ փակագծերում նշելով՝ տե՛ս «Պոստմոդեռնիզմ»

(էջ 93): Որտե՞ղ տեսնել: Սա խոսում է եկամուտ տարրի մասին: Նույն գլխում բերվում է Ռուբեն Անգալադյանի արտասովոր կարծիքը վերնախավի եւ ազնվականության ռեալիստական պատկերման մեծարենցյան փորձի շուրջ՝ չվիճարկելով կամ վերաբերմունք չդրսետրելով (էջ 96-97): Իբրեւ «մոդեռնիստական բնորոշ ձեւերն ու եղանակները» ցույց տալու օրինակ՝ Չարենցի առումով բերվում է Հասմիկ Խեչիկյանի եւ Հրաչյա Սարիբեկյանի գրքի դատողությունը (էջ 98): Արդյոք ճի՞շտ է միտքը, թե «Չարենցը համադրում է վերոնշյալ գաղափարները մոդեռնիզմի տարբեր ուղղությունների՝ սիմվոլիզմի, ֆուտուրիզմի, իրապաշտության բնորոշ գծերով, եւ ի տարբերություն այլ մոդեռնիստ գրողների, այդ գաղափարները հարստացնում է նաեւ ռոմանտիզմի ու ռեալիզմի «տարրերով» (էջ 103): Նույն հատվածում անբնական է թվում Տերյանի մուտքը: Բերվում են ամենատարբեր բանաստեղծներից հատվածներ, որոնք ինքնատպատակ են թվում (էջ 110-111) եւ չեն առնչվում ատենախոսության շարադրանքին:

Չմարսված են թվում շատ դրույթներ, որոնց սկզբնաղբյուրները, հաճախ նաեւ հեղինակները, մնում են վարագույրից այն կողմ: Այսպես, հարկ կա՞ր «Չարենցյան ընթերցումներ»-ի 5-րդ գրքից (1988) վերացականության դրոշմով երկարաշունչ քաղվածք մեջբերել՝ ապացուցելու համար, որ բանաստեղծի շուրջը արդեն «շրշում է» (՞) իրական կյանքը, կենդանի կանայք, առանց վուալների ու հղկված մաներաների, կանայք, որ ասես գարնան կուրծքն են պատռել եւ այնտեղից լույս աշխարհ եկել»: Եվ անմիջապես անհեթեթ շարադրանքը նույն էջի վրա՝ «Այս շրջունը ասես վերածնության մեղեդի լինի, որ լսվում է թմրությունից սթափվող (՞) բանաստեղծի ականջին» (էջ 119): Չեն մատնանշված ո՛չ հեղինակը, ո՛չ բանաստեղծն ու նրա ապրած ռեալ ժամանակը: Ի՞նչ ժամանակի է վերաբերում խոսքը՝ 20-րդ դարի տասականնե՞րն են, թե՞ երեսնականները: Այդ դեպքում՝ ինչո՞ւ քնարական անակնկալ մեջբերված վերացարկումը, թե այս ամենը այնքան «հոգեհարազատ էր ու զովացուցիչ (՞) նաեւ Շառլ Բոդլերի համար»: Ավելի վատթարը՝ սրանց հաջորդում են Չարենցի ու Լորկայի

տիպաբանության գյուտ-պատաստիկները, որոնք գիտական տարրերից հեռու քննափորձեր են:

Եզրակացության մեջ սպրդել են ձեռակերպումներ, որոնք ընդհանրապես չեն առնչվում աստենախոսության դրույթներին, ինչպես կինը՝ իբրև երկիր «Նաիրի»-ի խորհրդանիշ (էջ 123), Վահան Տերյանի մասին դատողությունները (էջ 122):

Գրականության ցանկում չեն տրվում ծանոթագրությունների թվահամարները, ինչը ԲՈԿ-ի պահանջների մեջ է:

Այժմ ընդհանրական կարգի դիտարկումներ.

Գլուխներն ունեն բնաբաններ (էջ 18, 57 եւ 93), որոնք ավելորդ են եւ գիտական նպատակ չեն հետապնդում: Մանավանդ վերջին՝ Բողլերի օրինակը մոդեռնիզմին վերաբերող գլխի սկզբում բոլորովին արդարացված չէ:

Մի շարք դեպքերում քաղվածքները բերվում են առանց էջանշումների: Մեջբերումները հաճախ տրվում են միջնորդավորված, ինչպես Կարա-Դարվիշի խոսքը Դավիթ Գասպարյանից՝ առանց մանրամասնելու (էջ 61), ռուս ֆուտուրիստների մանիֆեստը (էջ 63) կամ Նարեկացու միտքը (114) Էդ. Ջրբաշյանից:

Կան կետադրական անհարկի տրոհումների բազմաթիվ օրինակներ, քերականական եւ ուղղագրական վրեպներ (էջ 3-4, 8, 26, 42, 47, 50-53, 57-59, 65, 76, 78, 93, 90, 96, 115, 124, 127 եւ այլն):

Գրականագիտական դատողություններ են բերվում՝ առանց նշելու հեղինակներին, ինչը կարծես սովորություն է այս աշխատանքի համար (էջ 6, 24, 41, 45, 48-49, 55, 59, 67, 72, 105, 115):

Եվ գրականագիտության մեջ համենայն դեպս մեզ ընդհանրապես չհանդիպած մեղանշումի մասին. քաղվածք բերել արեւմտահայ մամուլից ու գրքերից՝ իրավունք վերապահելով նյութը շարադրել սեփական ընկալումներով ու իբր արեւելահայերենի վերածումներով: Այդպիսի օրինակներ են քաղվածքները «Բազմավեպ»-ում Հովսեփ Աշրաֆյանի հողվածից Կ.Վ. ծածկանունով, որի մասին աստենախոսը հարկ չի համարել տեղեկանալ (էջ 6), «Հայրենիք ամսագիր»-ում Հակոբ Օշականի «Եղիշե


Չարենց» հոդվածից (էջ 15), Գրիգոր Պըլտյանի «Հայկական ֆուտուրիզմ» գրքից (էջ 88 եւ 114)՝ սխալ գործածելով վերջինիս ազգանունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Նարեկ Գագիկի Սուքիասյանի «Եղիշե Չարենցը եւ 20-րդ դարասկզբի համաշխարհային գրական զարգացումները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը կարիք ունի հիմնարար փոփոխությունների եւ չի բավարարում ՀՀ ԿԳՄՍՆ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին, ուստի առաջարկում ենք այն ներկայացնել պաշտպանության կառուցվածքային, բովանդակային եւ փաստական արմատական վերանայումներից հետո:



ՍՈՒՐԵՆ ԴԱՎԹԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Վ. ՊԱՐՏԻԶՈՒՆՈՒ ԱՆՎ. ՀԱՅ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Հաստատում եմ պրոֆ. Ս. Ն. Ղանիելյանի ստորագրությունը:



ՍԱՐԻԱՄ ՄԿՐՏՉԻ ԻՍՊԻՐՅԱՆ
Խ. ԱՅՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՆ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ,
ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ